ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք. Երևան <<_____>>_____20 թ.

Մի կողմից (հետագայում՝ <<Վարձատու>>) _____

_____

և մյուս կողմից (հետագայում՝ <<Վարձակալ>>) _____

_____

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Ընդհանուր դրույթներ

1.1 Վարձատուն տրամադրում է Վարձակալին բնակելի տարածք _____ ժամկետով , որը գտնվում է _____հասցեում:
1.2 Կողմերի համաձայնությամբ տարածքի վարձավճարը կազմում է _____ _____ ՀՀ դրամ յուրաքանչյուր ամսվա համար:
1.3 Վարձակալը Վարձատուին վճարում է _____կանխավճար, որը կազմում է _____ ՀՀ դրամ:
1.4 Որպես վերջնավճար Վարձակալը Վարձատուին վճարում է _____ _____ ՀՀ դրամ, որպես վերջնավճար, որը ետ կվերադարձվի Վարձակալին, բնակարանի հանձնման –ընդունման ժամանակ, կոմունալ վճարման անդորրագրերը ներկայացնելուց:
1.5 Եթե Վարձակալը բնակարանը ազտում է 6/ վեց ամսից շուտ, ապա Վարձատուն իրավունք ունի ետ չվերադարձնել վերջնավճարը:
1.6 Յուրաքանչյուր ամսվա համար Վարձակալը պարտավոր է վարձակալած տարածքի վարձը Վարձատուին վճարել ոչ ուշ, քան մինչև հաջորդ ամսվա _____ ը:
1.7 Պայմանագրի տևողության ընթացքում վարձավճարը փոփոխության ենթակա չէ:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Վարձատուն պարտավորվում է.
2.1.1. Իրեն պատկանող տարածքն ու գույքը հանձնել Վարձակալին սույն պայմանագրով նշված վիճակում:
2.2. Վարձակալը պարտավորվում է.
2.2.1. Իրեն հանձնված տարածքն ու գույքը օգտագործել նպատակային և պայմանագրի ժամկետը լրանալուց հետո վերադարձնել այն Վարձատուին նույն վիճակում, հաշվի առնելով բնական մաշվածությունը:
2.2.2 . Իր հաշվին հոգալ կոմունալ բոլոր ծախսերը/ լույս, ջուր, գազ, աղբ, հեռախոս/
2.2.3 . Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո եռօրյա ժամկետում ազատել զբաղեցրած տարածքը և այն հանձնել Վարձատուին:
2.2.4. Իր մեղքով վարձակալած տարածքին հասցրած վնասը վերականգնել սեփական միջոցներով:
2.2.5. Վարձավճարը սույն պայմանագրով սահմանված ժամկետում չվճարելու կամ վճարումն ուշացնելու դեպքում վճարել տույժ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.5 տոկոսի չափով:

3. Կողմերի իրավունքները

3.1. Վարձատուն իրավունք ունի.
3.1.1. Վարձակալից պահանջել տարածքն օգտագործել նպատակային:
3.1.2 . Վարձակալից պահանջել վարձավճարի ժամկետին վճարում:
3.1.3 . Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո պահանջել ազատել զբաղեցրած տարածքը կամ վարձակալի հետ համաձայնության գալով երկարացնել պայմանագրի ժամկետը:
3.1.4. Առանց նախազգուշացման վաղաժամկետ դադարեցնել վարձակալության պայմանագիրը, եթե վարձակալը մեկ ամսից ավելի չի վճարում տարածքի վարձը:

3.2. Վարձակալն իրավունք ունի.
3.2.1.Վարձակալած տարածքում կատարել շին-մոնտաժային աշխատանքներ միայն Վարձատուի գրավոր համաձայնությամբ:
3.2.2.Միակողմանիորեն դադարեցնել վարձակալության պայմանագիրը այդ մասին նախօրոք, մեկ ամիս առաջ գրավոր տեղյակ պահելով Վարձատուին:

4. Այլ պայմաններ

4.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած վեճերը կարգավորվում են համաձայն գործող օրենսդրության:
4.2.Պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման և դրա հետևանքով առաջացած հարկային պարտավորությունները կողմերը կատարում են ինքնուրույն:
4.3. Տարածքը ենթավարձակալության տալն արգելվում է:
4.4.Պայմանագիրը կնքված է համարվում կողմերի ստորագրության պահից:
4.5.Պայմանագիրը կնքված է _____ ժամկետով <<____>>_____թ.
մինչև <<_____>>_____թ.

5. Կողմերի իրավաբանական հասցեները

Վարձատու	Վարձակալ
_____	_____
անուն, ազգանուն	անուն, ազգանուն
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
հեռ.	հեռ.